

Անոր թեւերը բեռցուցին համբոյրով...
 Արդ սարսուռով մ'օրհասի
 Ան վըրայէն կը թօթուէ
 Մեծ վիշտն Ազգի մը նըժդեհ,
 Ուխտեր յանձնուած, լացեր գաղտ
 Նըշանածի մ'որ տեսաւ ա՛լ իր յետին
 Վարդի թօշնումը դեռ բընա՛ւ չհամբուրուած,
 Տըրտում օրհնենք մը մամու,
 Սերեր, իղձեր, կարօտներ
 Ա՛լ վըրայէն կը թօթուէ:
 Եւ գետափին գորշապատ
 Ամայութեան մէջ բանալով վերջին հեղ
 Յոգնած թռիչներն ուղղաբերձ՝
 Հայ բլուրներուն, գիւղերուն վրայ կիսաւեր,
 Կըրկըռոցովն օրհասի
 Գաղթումը ան կ'անկիծէ՛:
 Եւ կ'իյնայ, լուռ: Խիճերուն վրայ գետափին
 Կ'որոշէ իր գերեզմանն,
 Ու մըխելով կըտուցն հիր
 Բարի մը տակ, բընակարան դօդօշի,
 Բարշ ձըգած վիզն իր ճապուկ,
 Ալիքներուն երգին մէջ
 Դողով մը վեհ կը մեռնի՛...
 Հոն օձ մ'որ լուռ, երկա՛ր ատեն, կը դիտեր
 Այդ ճըզնաժամն ակընկառոյց բիբերով՝
 Գետեզերէն վեր կը սողայ
 Ու վրէժէ մ'հին օրերու,
 Վատ ոստումով մ'հապըշտապ
 Անոր մեռած պարանոցին կ'ոլորուի...